Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի
երկրորդ գումարման հոգաբարձուների խորհրդի՝
2020 թ. օգոստոսի 25-ին տեղի ունեցած թիվ 1 նիստի

ք. Երևան 25.08.2020 թ.

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ ՀՀ վարչապետի կողմից 2020 թ. օգոստոսի 7-ի № 910-Ա որոշմամբ հաստատված հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 30-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Օրակարգային առաջին հարցի ժամանակ նիստը նախագահում էր Խորհրդի՝ տարիքով ավագ անդամը՝ ԵՊՀ դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի պրոֆեսոր Ա. Չուբարյանը, քարտուղարում՝ ամենակրտսեր անդամը՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանող Խ. Աբաջյանը: Օրակարգային առաջին հարցի քննարկումից հետո նիստը նախագահում էր Խորհրդի նորընտիր նախագահ Գ. Մուրադյանը: Երկրորդ հարցի քննարկումից հետո նիստը քարտուղարում էր Խորհրդի նորընտիր քարտուղար, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ Մ. Մալխասյանը:

Ա. Չուբարյանը, բացելով Խորհրդի անդրանիկ նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և բարձրաձայն կարդաց Խորհրդի անդամների անվանացանկը: Մինչ օրակարգի հաստատմանն անցնելը նա ասաց, որ պետք է որոշում կայացնել տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչներին նիստերի դահլիճ ներս թողնելու կամ չթողնելու վերաբերյալ: Այս հարցի առնչությամբ Խորհրդի անդամ, ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ղեկավար Ս. Սիսեռյանը առաջարկեց անցկացնել փակ նիստ, քանի որ ՀՀ պարետատան կողմից սահմանվել է հանրային միջոցառումների ժամանակ փակ տարածքում առավելագույնը 40 հոգու առկայության սահմանափակում: Խորհրդի անդամ, ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ Մ. Սողոմոնյանն առաջարկեց, որ նիստը բաց անցկացվի: Խորհրդի անդամ, ԵՊՀ ՈՒԽ նա-

խագահ Դ. Ափոյանն էլ առաջարկեց, որ ՀՀ պարետի որոշումը պահպանելու և միաժամանակ նիստի թափանցիկությունը լրագրողների ներկայությամբ ապահովելու համար դահլիճից դուրս գան Խորհրդի անդամ չհանդիսացող անձինք, և նրանց փոխարեն ներս հրավիրվեն լրատվամիջոցների ներկայացուցիչները: Խորհրդի անդամ, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանը հարցրեց՝ արդյոք տեղեկություն կա, թե որքան լրագրողներ են ուզում դահլիճ գալ: Ա. Չուբարյանը պատասխանեց, որ, ըստ երևույթին, 10-ից ոչ ավել լրագրողների է պետք ներս թողնել: Ժ. Անդրեասյանը հակադարձեց, թե ինչպես են ընտրելու՝ լրատվամիջոցներից որոնց ներս թողնել, և առաջարկեց միանման մոտեցում ցուցաբերել, ճշտել նրանց թվաքանակը և հստակեցնել ներկայությունն ապահովելու հնարավորությունը: Ա. Չուբարյանը նշեց, որ ինքը 10-ից ավելի լրագրող չի տեսել: Խորհրդի անդամ, «Մետրիկա» ՍՊԸ-ի հիմնադիր Գ. Մուրադյանն առաջարկեց, որ եթե նույնիսկ նշված թվից ավելի լրագրողներ կան, կարելի է առաջարկել ԵՊՀ հանրային կապերի ծառայությանը՝ ապահովելու ուղիղ հեռարձակումը, իսկ մյուս լրատվամիջոցները ցուցադրեն այդ հեռարձակումից: Ծառայության ղեկավար, ԵՊՀ ռեկտորի մամուլի խոսնակ Գ. Էմին-Տերյանը պատասխանեց, որ ԵՊՀ-ն ուղիղ հեռարձակման սարք չունի: Ա. Չուբարյանը նշեց, որ նիստը քարտուղարող Խ. Աբաջյանը գնացել է լրագրողների մոտ, որպեսզի ճշտի նրանց թվաքանակը: Խորհրդի անդամ, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանը հարցրեց, թե որքան է այն մարդկանց շրջանակը, որ, Խորհրդի անդամ չլինելով, պետք է մասնակից լինեն նիստին: Խորհրդի անդամ, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ Մ. Մալխասյանը պատասխանեց, որ վարման կարգով՝ Խորհրդի աշխատակարգում, սահմանված չէ, թե, Խորհրդի անդամներից բացի, ովքեր պետք է ներկա լինեն կամ չլինեն նիստին: Մ. Սողոմոնյանը տեղեկացրեց, որ ԵՊՀ հանրային կապերի ծառայությունը նիստին ներկայացված է հինգ աշխատակիցներով: Խորհրդի անդամ, Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի տնօրեն Հ. Նավասարդյանը նշեց, որ այդ պահին դահլիճում արդեն իսկ ներկա էին 42 մարդիկ: Ս. Սիսեռյանն առաջարկեց, որ Խորհրդի անդամ չհանդիսացող ներկաներից մի քանիսը դուրս գան դահլիճից: Խ. Աբաջյանը, վերադառնալով դահլիճ, տեղեկացրեց, որ ԵՊՀ մուտքի մոտ սպասում են 20-ից ավելի լրագրողներ՝ 11 տեսախցիկներով: Նա առաջարկեց, որ առցանց հեռարձակում ապահովելու նպատակով լրատվամիջոցների ներկայացուցիչները միայն տեսախցիկները տեղադրեն դահլիճում, դուրս գան դահլիճից, պարբերաբար գան և

ստուգեն իրենց սարքերի աշխատանքը: Գ. Մուրադյանը խնդրեց բոլոր առաջարկները հերթով դնել քվեարկության, որպեսզի նիստի ընթացքը չխաթարվի: Նա համաձայնվեց Խ. Աբաջյանի առաջարկի հետ, եթե դա տեխնիկապես հնարավոր է ապահովել, և խնդրեց Խորհրդի անդամ չհանդիսացող ներկաներին դուրս գալ դահլիճից: Նա նշեց, որ մեկ հոգին կարող է հետևել բոլոր տեսախցիկների աշխատանքին, սակայն Խորհրդի մի քանի անդամներ հակադարձեցին, որ լրատվամիջոցների ներկայացուցիչները չեն համաձայնվի այդ տարբերակին: Ժ. Անդրեասյանը կրկին պնդեց, որ անհրաժեշտ է պահպանել պարետատան սահմանափակումները և առաջարկել լրագրողներին տեղադրել տեսախցիկները և հեռանալ դահլիճից: Ա. Չուբարյանը առաջարկը դրեց քվեարկության. կողմ՝ 30, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Սակայն քվեարկությունից անմիջապես հետո մտահոգություն հնչեց, որ որևէ լրագրող չի համաձայնվի այս տարբերակին: Խորհրդի անդամ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Հ. Արշամյանն առաջարկեց, որ մի քանի լրատվամիջոցներ ապահովեն հեռարձակումը, իսկ մյուսները նրանցից վերահեռարձակեն: Խ. Աբաջյանը գնաց լրագրողների մոտ՝ տեղեկացնելու, որ օպերատորները բերեն տեսախցիկները, և նրանցից մեկը հետևի ամբողջ աշխատանքին: Խորհրդի անդամ, «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի տնօրեն Գ. Հարությունյանն առաջարկեց ԵՊՀ մեծ դահլիճում շարունակել նիստը, որ սոցիալական հեռավորություն հնարավոր լինի պահպանել ավելի մեծ թվով ներկաների պարագայում, սակայն Խորհրդի մի քանի անդամներ և Ա. Չուբարյանը հակադարձեցին, որ տարածքի մակերեսի խնդիր չկա, քանի որ պարետատան կողմից սահմանված 40 հոգու սահմանափակումը մեծ մակերեսի դեպքում էլ է նույնը:

Մինչ լրագրողների դիրքորոշումը ճշտելը նիստի վերաբերյալ ծանուցման և վարման կարգի հետ կապված մի խնդիր բարձրաձայնեց Խորհրդի անդամ Մ. Մալխասյանը: Նա նշեց, որ իր էլեկտրոնային փոստի հասցեին Խորհրդի նիստի վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո գրել է որոշ նկատառումներ պարունակող պատասխան նամակ, սակայն այդպես էլ չի ստացել իր հարցադրումների պատասխանները: Հետևաբար նա կարդաց իր նամակի տեքստը ամբողջությամբ, որտեղ մասնավորապես նշում էր, որ ծանուցումն անվանական չէ՝ ո՛չ ծանուցողի անունն է նշված, ո՛չ էլ ծանուցվողի: Ա. Չուբար-

յանը նշեց, որ ինքը նամակ չի ստացել: Մ. Մալխասյանը շարունակեց, որ, համաձայն Խորհրդի աշխատակարգի 3.12 կետի՝ նիստի հրավիրման և օրակարգի մասին Խորհրդի քարտուղարն անդամներին տեղեկացնում է առնվազն 5 օր առաջ, գրավոր ծանուցմամբ: Նույնը սահմանված է նաև Խորհրդի աշխատակարգի 2.10 կետի 1-ին ենթակետով: Եթե նոր գումարման Խորհուրդ չէ, ծանուցումը պետք է իրականացնի օրինական ընտրված քարտուղարը, եթե անգամ նա ներկայացված Խորհրդի կազմում արդեն ընդգրկված չէ: Սակայն սա արդեն երկրորդ գումարման Խորհուրդն է, հետևաբար, աշխատակարգի 3.8 կետի համաձայն, նիստը պետք է քարտուղարեր Խորհրդի ամենակրտսեր անդամը, իսկ ծանուցումն էլ պիտի գար իր անունից: Նա նաև ասաց, որ քանի որ սա երկրորդ գումարման Խորհուրդն է, ծանուցման մեջ տեղ գտած «ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի թիվ 19 նիստ» ձևակերպումը սխալ է, և պետք է գրել ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի երկրորդ գումարման հոգաբարձուների խորհրդի թիվ 1 նիստ»: Նիստը նախագահողի և քարտուղարողի փոխարեն նկատառմանը պատասխանեց Խորհրդի անդամ Գ. Մուրադյանը: Նա նշեց, որ նիստը կազմակերպել են ինքը՝ որպես նախորդ գումարման Խորհրդի նախագահ, և նույն գումարման Խորհրդի վերջին քարտուղար Գ. Հայրապետյանը: Գ. Մուրադյանը պատասխանեց, որ նոր Խորհրդի անդրանիկ նիստի կազմակերպման հարցում ընթացակարգը հստակ կանոնակարգված չէ Խորհրդի աշխատակարգում: Նիստի համարանշման պարագայում նա ընդունեց, որ տեղ է գտել տեխնիկական վրիպակ, իսկ էլեկտրոնային փոստով ծանուցումը կարող է համարվել գրավոր պատշաճ ծանուցում:

Այնուհետև Ա. Զուբարյանն առաջարկեց անցնել օրակարգի քննարկմանը, սակայն Դ. Ափոյանը խնդրեց սպասել լրագրողների պատասխանին՝ հետագա շահարկումներից զերծ մնալու համար: Նա նաև հարց ուղղեց Գ. Մուրադյանին, թե ով է նրան ծանուցել նախորդ գումարման Խորհրդի՝ թարմացված կազմով 2019 թ. առաջին նիստի վերաբերյալ: Գ. Մուրադյանը պատասխանեց, որ իրեն ծանուցել է նախորդ Խորհրդի քարտուղար Մ. Մալխասյանը:

Վերադառնալով դահլիճ՝ Խ. Աբաջյանը տեղեկացրեց, որ լրագրողները պատասխանել են, թե չեն կարող տեսախցիկները թողնել և հեռանալ, ընթացքում պետք է հետևեն սարքավորումների աշխատանքին: Նա նշեց նաև, որ առաջարկել է այդ դեպքում

մեկ հոգի հեռարձակի, մյուսները նրանից վերահեռարձակեն, սակայն այս տարբերակը ևս չի ընդունվել լրագրողների կողմից: Վերջիններս առաջարկել են գոնե միջանցքում տեղադրել տեսախցիկները և այնտեղից հետևել նիստի ընթացքին: Խ. Աբաջյանը հավելեց, որ նրանց պատասխանել է, թե նախասրահից անհնար կլինի հետևել նիստի ընթացքին: Գ. Մուրադյանը նշեց, որ Խորհուրդն իրավասություն չունի արգելելու լրագրողների մուտքը միջանցք, իսկ Խորհրդի անդամ, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ասպիրանտ Ա. Սողոմոնյանն առաջարկեց նման արձագանքի պարագայում սկսել նիստը: Ա. Զուբարյանը ևս նշեց, որ եթե Խորհրդի բոլոր առաջարկները մերժվում են լրագրողների կողմից, ուրեմն ստիպված են սկսել նիստը: Դ. Ափոյանն առաջարկեց նիստերի դահլիճի ապակեպատ հատվածի հետևից թույլ տալ նկարահանել ընթացքը, սակայն Մ. Սողոմոնյանը նշեց, որ այդտեղ տարածքը փոքր է: Ժ. Անդրեասյանը հետաքրքրվեց՝ արդյոք ԵՊՀ հանրային կապերի ծառայությունը նիստի ամբողջ ընթացքը տեսագրում է, թե ոչ: Ա. Զուբարյանը պատասխանեց՝ այո: Ժ. Անդրեասյանն առաջարկեց, որ նիստի տեսագրությունը հետո հրապարակվի ԵՊՀ հանրային կապերի ծառայության կողմից, և այս հարցից վերջապես հնարավոր լինի անցնել օրակարգի քննարկմանը: Ա. Զուբարյանը նշեց, որ ստիպված են այդպես վարվել, քանի որ առաջարկված ոչ մի լուծում չի ընդունվել լրագրողների կողմից: Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 11:

Լրագրողների աշխատանքի հետ կապված քվեարկությունից հետո Ա. Զուբարյանն առաջարկեց անցնել օրակարգի հաստատմանը: Խորհրդի անդամ Մ. Սողոմոնյանն առաջարկեց օրակարգում մտցնել ՀՀ վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի և «Մետրիկա» ՍՊԸ-ի հիմնադիր Գ. Մուրադյանի՝ Խորհրդի անդամ լինելու լիազորությունների դադարեցման հարցը: Նա նշեց, որ հարցն օրակարգում ներառելն ունի իրավական հիմնավորումներ, որոնք նույնիսկ կարող են կասկածի տակ դնել Խորհրդի կողմից կայացվող որոշումների լեգիտիմությունը: Ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթների՝ նման խորհուրդների նույնիսկ մեկ անդամի նշանակման իրավական հիմքի խախտումն առ ոչինչ է դարձնում Խորհրդի ցանկացած որոշում: Նա նշեց, որ Վ. Պապիկյանը Խորհրդի անդամ է նշանակվել հիմնադրի կողմից՝ որպես պետական պաշտոնյա՝ զբաղեցնելով վարչապե-

տի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնը: Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի՝ պետական պաշտոնները դասակարգվում են քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական տեսակների: Օրենքի հաջորդ հոդվածներում մանրամասն թվարկվում են, թե որ պաշտոններն են համարվում համապատասխանաբար քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական (5-րդ հոդվածի 1-ին, 6-րդ հոդվածի 4-րդ, 7-րդ հոդվածի 3-րդ, 8-րդ հոդվածի 3-րդ մասեր), և այդ պաշտոններից ոչ մեկի մեջ չի ընդգրկվում վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչը: Նա կարող է համարվել պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձ, քանի որ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքը հստակ տարբերակում է այդ երկու խումբ պաշտոնները: Նա նշեց նաև, որ նախկինում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքն օգտագործում էր «բարձրաստիճան պաշտոնատար անձ» հասկացությունը, որը ներկայումս փոխարինվել է «պետական պաշտոնատար անձ» հասկացությամբ, բայց քանի որ բարձրաստիճան պաշտոնատար անձինք գործող օրենսդրությամբ ամբողջությամբ համարվել են հանրային ծառայողներ, ուստի գործող օրենսդրությունը տարբերակում է դրել պետական պաշտոն ունեցող հանրային ծառայողների և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող հանրային ծառայողի միջև, քանի որ, ըստ պաշտոնի, հանրային ծառայության բարձր (պետական) պաշտոն զբաղեցնողների համար առկա են ավելի խիստ սահմանափակումներ և այլ կարգավորումներ: Ուստի այս համատեքստում ԵՊՀ կանոնադրության մեջ օգտագործված «պետական պաշտոն» հասկացությունը պետք է կիրառվեր գործող օրենսդրության նորմերի հիման վրա, այլ ոչ թե կամայականորեն: Մ. Սողոմոնյանը հավելեց, որ Գ. Մուրադյանն ինչպես նախորդ, այնպես էլ այս Խորհրդում անդամ է նշանակվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից՝ որպես տնտեսության ոլորտի ճանաչված ներկայացուցիչ կամ համալսարանի հետ համագործակցող գործատու: Նրա պնդմամբ՝ Գ. Մուրադյանն այդ կարգավիճակում առաջադրվել է՝ լինելով հասարակության շրջանում անհայտ «Մետրիկա» ՍՊԸ-ի հիմնադիր, իսկ մինչև 2018 թ. գարունը զբաղեցրել է պետական պաշտոն, 2017 թ. խորհրդարանական ընտրություններում եղել է ՀՀԿ համամասնական ընտրական ցուցակում, բայց տնտեսական գործունեությամբ հայտնի չի եղել, քանի որ ձեռնարկատիրական գործունեությունն անհամատեղելի է պետական պաշտոնի հետ: Մ. Սողոմոնյանը հարցականի տակ դրեց

նաև «Մետրիկա» ՍՊԸ-ի՝ ՀՀ տնտեսության մեջ ունեցած դերը՝ պնդելով, որ այն չի կարող համարվել ո՛չ ԵՊՀ գործատու, ո՛չ տնտեսության ոլորտի ճանաչված ներկայացուցիչ: Նրա պնդմամբ՝ ոչ թե «Մետրիկա» ՍՊԸ-ն է հայտնի դարձրել Գ. Մուրադյանին, որը ներկայացնելով՝ նա ընդգրկվել է Խորհրդում, այլ Գ. Մուրադյանի՝ Խորհրդում հայտնվելն է հայտնի դարձրել «Մետրիկա» ՍՊԸ-ն: Նրա կարծիքով՝ այս կերպ խախտվում է ԵՊՀ կանոնադրության 31-րդ կետը: Նա հավելեց նաև, որ Գ. Մուրադյանը, անդամակցելով նախորդ Խորհրդին, չի պահպանել ֆիդուցիար պատասխանատվության իր շրջանակը, գործել է ԵՊՀ շահերի դեմ: Ֆիդուցիար պատասխանատվությունն իրավաբանության մեջ գոյություն ունեցող սկզբունք է, որով հաստատության, իրավաբանական անձի պաշտոնյան, խնամակալը, տվյալ դեպքում՝ հոգաբարձուն, պետք է բացառապես իր խնամակալությանը հանձնված հաստատության շահերից բխող գործունեություն վարի և չառաջնորդվի այլ դիրեկտիվներով կամ անձնական շահերով: Մ. Սողոմոնյանը պնդեց, որ Գ. Մուրադյանը, 2018 թ. դեկտեմբերից մինչև 2020 թ. մարտը լինելով Խորհրդի նախագահ, խոստացել էր բարեփոխումներ կատարել, հաճախ անցկացնել Խորհրդի նիստեր, պարբերաբար հանդիպել դասախոսների և ուսանողների հետ, սակայն չի կատարել խոստումները, բարձրաստիճան պաշտոնների է նշանակել տվել իր մտերիմներին, առանց հիմնավորման որոշում է անցկացրել՝ փակելու Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը՝ հակադրվելով ԵՊՀ գիտխորհրդի որոշման տրամաբանությանը և անտեսելով ուսանողների բողոքները: Խորհուրդը, համաձայն ԵՊՀ կանոնադրության և իր աշխատակարգի, իրավասու է դադարեցնել իր անդամի կամ անդամների լիազորությունները: Ըստ Մ. Սողոմոնյանի՝ ֆիդուցիար պատասխանատվության շրջանակի և նշանակման հետ կապված դրույթի խախտումը լուրջ հիմք է մի մասով Վ. Պապիկյանի, երկու մասով՝ Գ. Մուրադյանի լիազորությունները դադարեցնելու համար: Ելնելով նշված փաստարկներից՝ նա առաջարկեց օրակարգում ընդգրկել Վ. Պապիկյանի և Գ. Մուրադյանի՝ Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու հարցը:

Արձագանքելով Մ. Սողոմոնյանի փաստարկներին՝ Ա. Զուբարյանը նշեց, որ իր համար Վ. Պապիկյանի անդամության վերաբերյալ հնչեցված դիտարկումները հասկանալի են և իրավաբանորեն հիմնավորված, իսկ Գ. Մուրադյանի պարագայում լավ չհասկացավ իրավական մասը: Մ. Սողոմոնյանն արձագանքեց, որ իրավական հիմնավորու-

մը ֆիդուցիար պատասխանատվության իրավական սկզբունքն է: Գ. Մուրադյանը պատասխանեց, որ հնչեցված մտքերը համարում է Մ. Սողոմոնյանի և գուցե նաև այլ անձանց կարծիքը, բայց նշեց, որ չեն նայել մինչև 2016 թ. իր կենսագրությունը: Նա հիշեցրեց, որ ավարտել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը, սովորել ասպիրանտուրայում, ապա աշխատել ԵՊՀ-ում, զբաղվել քվանտային տեխնոլոգիաներով, գիտական գործունեություն իրականացրել ԱՄՆ-ում, Իտալիայում և Գերմանիայում, իսկ նրա գիտական նախաձեռնությունները ներդրվել են տնտեսության մեջ, սակայն, ցավոք, ոչ ՀՀ-ում, քանի որ ՀՀ տնտեսական զարգացվածության աստիճանը դեռևս բարձր մակարդակի չի հասել: Նա հավելեց, որ 2016-2018 թթ. լինելով ՀՀ վարչապետի խորհրդական՝ համակարգել է կրթական համակարգի բարեփոխումները, իսկ 2019 թ. դարձել է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ: Նա կարծիք հայտնեց, որ 2018 թ. հետո Մ. Սողոմոնյանն իր գործունեությամբ չի նպաստել ԵՊՀ զարգացմանը, բայց դա համարեց իր սուբյեկտիվ կարծիքը: Մ. Սողոմոնյանն արձագանքեց, որ Խորհրդում Գ. Մուրադյանն ընդգրկվել է ոչ թե որպես կրթական հարցերի համակարգողի կամ գիտական ոլորտում իր գործունեության հիմքով, այլ՝ որպես «Մետրիկա» ՍՊԸ-ի հիմնադիր, այսինքն՝ որպես տնտեսության ոլորտի ներկայացուցիչ:

Վ. Պապիկյանն էլ ասաց, որ արդեն յոթ տարի համատեղությամբ աշխատում է նաև ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնում՝ որպես դոցենտ, բայց պատրաստ է հրաժարվել Խորհրդի անդամի կարգավիճակից, երբ համապատասխան իրավակարգավորումներով իրեն համոզեն, որ բերված փաստարկները հավաստի են:

Դ. Ափոյանն արձագանքեց, որ Մ. Սողոմոնյանի կողմից հնչեցվել են հիմնավոր փաստարկներ, իսկ Վ. Պապիկյանի պատասխանի վերաբերյալ նշեց, որ վստահում է նրա խոսքին, բայց միաժամանակ խնդրահարույց է համարում, որ եթե մինչև հաջորդ նիստը պարզվի՝ նա չէր կարող լինել Խորհրդի անդամ, այդ դեպքում հարվածի տակ է հայտնվում Խորհրդի նիստի լեգիտիմությունը: Նա անընդունելի համարեց, որ հերթական անգամ կարող է Մայր բուհի անունը շահարկվել՝ որպես անօրինական գործողություններով աչքի ընկնող տեղ: Նա նաև նշեց, որ ծանոթ է Գ. Մուրադյանի կենսագրությանը, սակայն նրա ՍՊԸ-ի ճանաչելիության հետ կապված կիսում է Մ. Սողոմոնյանի

մտահոգությունները՝ նշելով, որ ԵՊՀ-ում մեծամասնության կարծիքն է, որ նա չի գործել հանուն բուհի շահի: Դրա ապացույց նա համարեց այն, որ նրա ղեկավարությամբ Խորհուրդն ընդունել է մի քանի որոշումներ, որոնք հանգեցրել են շուրջ երկու տասնյակի հասնող դատական գործերի: Նա առաջարկեց տեղում որոշում կայացնել նշված անդամների լիազորությունների դադարեցման վերաբերյալ: Խորհրդի անդամ Ժ. Անդրեասյանը փաստեց, որ ինքը ևս համալսարանական է, բուհի շահն առաջնային է համարում, իսկ Գ. Մուրադյանի համար հնչած դիտարկումները հիմնավոր չի համարում: Նա կարդաց ԵՊՀ կանոնադրության 31-րդ կետը, որտեղ գրված է՝ լիազոր մարմնի կողմից Խորհրդի անդամ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչները, ինչպես նաև ԵՊՀ հետ համագործակցող գործատուները, այսինքն՝ ներկայացված անձինք կարող են լինել նշված ոլորտներից որևէ մեկի ներկայացուցիչ, իսկ Գ. Մուրադյանը նաև կրթության ոլորտի ներկայացուցիչ է, ունի գիտական աստիճան, ունի գիտական գործունեության ոլորտում արդյունքներ: Մ. Սողոմոնյանը պատասխանեց, որ չի վիճարկում Գ. Մուրադյանի անձը և գիտական գործունեությունը, բարձրաձայնում է նրա անդամության համար հիմք ծառայած կարգավիճակը՝ որպես տնտեսության ոլորտի ճանաչված ներկայացուցիչ և համալսարանի գործատու, այլ ոչ թե որպես վերը նշված մյուս ոլորտների ներկայացուցիչ: Ս. Սիսեռյանն առաջարկեց հարցը դնել քվեարկության, սակայն նիստը նախագահողը նշեց, որ երկու անձերի անդամության վերաբերյալ հիմքերը տարբեր են, ինքն էլ երկուսից յուրաքանչյուրի դեպքում ունի տարբեր դիրքորոշումներ, չի կարող հերքել կամ հաստատել Վ. Պապիկյանի անդամության վերաբերյալ հիմնավորումները, որովհետև իրավաբան չէ, սակայն Գ. Մուրադյանի վերաբերյալ ունի դրական կարծիք, քանի որ նրան հարգում է՝ որպես դասախոս, ուսանողներից էլ սովորաբար դրական կարծիքներ է լսել: Խ. Աբաջյանն առաջարկեց նշված անձանցից յուրաքանչյուրի համար կազմակերպել առանձին քվեարկություն, քանի որ Խորհրդի յուրաքանչյուր անդամ, ըստ ԵՊՀ կանոնադրության, ունի Խորհրդի օրակարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկ ներկայացնելու իրավունք: Հ. Նավասարդյանն արձագանքեց, որ չի բացառվում, որ հետագայում Խորհրդի մեկ այլ անդամի մասին կարող է հետագայում որևէ հանգամանք բացահայտվել, ինչը կարող է անհամատեղելի դարձնել նրա անդամությունը Խորհրդում, իսկ դա չի նշանակում, որ նիստը հետո պետք է անվավեր համարվի: Նա կարծիք հայտ-

նեց, որ քանի դեռ նրանք ՀՀ վարչապետի որոշմամբ Խորհրդի անդամներ են, չեն կարող Խորհրդի որոշումները սխալ համարվել: Խորհրդի անդամ, ԵՊՀ հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոնի պրոֆեսոր Ա. Հախումյանը ևս ելույթ ունեցավ՝ նշելով, որ հարցերի բնույթն օրենսդրական դաշտի մեջ է, անձերի արժանիքներին չի վերաբերում, հետևաբար չի կարելի նման հարցը դնել քվեարկության: Նրա պնդմամբ՝ շատ տարիներ առաջ մանդատային հանձնաժողով կար, որ նախապես ստուգում էր փաստաթղթերը և թույլատրում անդամությունը: Գ. Հարությունյանն էլ նշեց, թե կարևոր չէ՝ քանի հոգու վերաբերյալ է առաջարկը, պետք է այդ հարցը՝ որպես լրացում ընդունելը դնել քվեարկության: Դ. Ափոյանը նշեց, որ կիսում է Ա. Հախումյանի կարծիքը, որ սա իրավական խնդիր է, հետևաբար կարելի է հետաձգել նիստը 5-6 օրով՝ մինչև իրավական հարցերի ճշգրտումը կոնկրետ Վ. Պապիկյանի մասով: Գ. Հարությունյանը նշեց, որ, ըստ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի, Խորհուրդը պետք է ընդունի նախապես առաքված օրակարգը կամ ներառի հավելումը: Ս. Սիսեռյանը պնդեց, որ հարցը շտապ դրվի քվեարկության: Խ. Աբաջյանն առաջարկեց լսել՝ գուցե օրակարգում ներառելու այլ հարցեր էլ են ներկայացվում:

Օրակարգում մեկ այլ հարց առաջարկեց ավելացնել Դ. Ափոյանը. փոփոխություն կատարել Խորհրդի աշխատակարգում և թույլ տալ Խորհրդի նախագահի թեկնածու առաջադրել պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին: Ըստ նրա՝ հակասություն կա Խորհրդի աշխատակարգի և ԵՊՀ կանոնադրության միջև, մասնավորապես՝ ԵՊՀ կանոնադրության մեջ գրված է, որ Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները իրենց կազմից, բացի ուսանողներից, Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, մինչդեռ Խորհրդի աշխատակարգով ավելացվել է այն սահմանափակումը, որ չի կարող նախագահ ընտրվել նաև բուհում հաստիքային աշխատողը: «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում նշվում է, որ Խորհուրդը կարող է փոփոխություններ անել իր հաստատած աշխատակարգում: Բացի այդ՝ եթե այս հակասությունները մեկնաբանվում են օրենքի տրամաբանությամբ, ապա կանոնադրությունը, որ հաստատվում է կառավարության կողմից, ունի ավելի մեծ իրավական կշիռ, քան աշխատակարգը: Նա նշեց, որ այս հակասությունը, իր համոզմամբ, մնացել է ԵՊՀ կարգավիճակը փոխելիս, երբ այն ՊՈԱԿ-ից վերակազմավորվել է հիմնադրամի: Նիստը նախագահողը

նշեց, որ ԵՊՀ կանոնադրությունը հաստատվել է 2014 թ., իսկ Խորհրդի աշխատակարգը՝ 2015 թ., հետևաբար, իր կարծիքով, երկրորդն ունի առաջնայնություն՝ որպես ավելի ուշ ստեղծված: Մ. Մալխասյանը, ի պատասխան, նշեց, որ ԵՊՀ կանոնադրության իրավաբանական ուժը բնականաբար ավելի բարձր է, քան Խորհրդի աշխատակարգի իրավաբանական ուժը, և այստեղ ամսաթիվը կապ չունի: Գ. Մուրադյանը պատասխանեց, որ իրենք դեռևս ռեկտորի ընտրություններին նախապատրաստվելիս ուսումնասիրել են Խորհրդի աշխատակարգն ու ԵՊՀ կանոնադրությունը և հանգել հետևյալ եզրակացությանը. դասախոսի առաջադրման դեպքում իրավական խնդիր է առաջանում է այն տեսակետից, որ Խորհրդի նախագահն այն անձն է, որը պայմանագիր է ստորագրում ռեկտորի հետ, որն իրավաբանական տեսանկյունից փաստացի համարվում է վերահսկող: Միաժամանակ ռեկտորը պայմանագիր է կնքում նույն մարդու հետ՝ որպես իր աշխատողի: Այստեղ առաջանում է շահերի բախում. սա է հիմնական պատճառը, որ այդ կետը ներառվել է և չի հանվել ի սկզբանե: Գ. Մուրադյանը հակասություն չի տեսնում իրավական տեսակետից երկու փաստաթղթերի միջև: Նրա խոսքով՝ կանոնադրությունը չի նշում, թե ԵՊՀ դասախոսական անձնակազմից ընտրված անդամները պարտադիր պետք է լինեն հիմնական աշխատողներ. իրավական տեսանկյունից գիտխորհուրդը նույնիսկ կարող է առաջարկել կամայական մարդու՝ հիմնական կամ ոչ հիմնական աշխատողի, նույնիսկ՝ դրսից: Այդ կետերի ներառման տրամաբանությունը Գ. Մուրադյանը տեսնում է շահերի բախում չառաջացնելու մեջ:

Մ. Մալխասյանն արձագանքեց, որ Խորհրդի ներկա անդամներից միայն ինքն է եղել Խորհրդի կազմում, երբ հաստատվել են Խորհրդի աշխատակարգը և ռեկտորի ընտրության կանոնակարգը, և այդ գործընթացում Խորհուրդն առաջնորդվել է «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի համապատասխան իրավական փաստաթղթերով, հետևաբար շատ դրույթներ պատճենված տեղ են գտել նախկին կարգավիճակով բուհի փաստաթղթերից նոր փաստաթղթերում՝ առաջացնելով որոշակի հակասություններ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի հետ: Խորհրդի անդամ, ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ Կ. Խաչատրյանը մեջբերեց ԵՊՀ կանոնադրության 34-րդ կետը՝ նշելով, որ Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները՝ Խորհրդի անդամների կազմից (բացի ուսանողության ներկայացուցիչներից), այսինքն՝

կանոնադրությամբ սահմանափակված է միայն ուսանող անդամի առաջադրումը, հետևաբար, լինելով ավելի բարձր իրավական ուժով փաստաթուղթ՝ կանոնադրությունը գերակա է Խորհրդի աշխատակարգի նկատմամբ: Խորհրդի անդամ Ա. Մարտիրոսյանը նշեց, որ, իր կարծիքով, երկու փաստաթղթերը միմյանց փոխլրացնում են, և առաջարկեց անցնել քվեարկություններին:

Նիստը նախագահողն առաջարկեց ներկայացված փոփոխությունների հարցերը դնել քվեարկության: Խ. Աբաջյանն ասաց, որ յուրաքանչյուր հարց պետք է առանձին դնել քվեարկության: Մ. Մալխասյանը նշեց, որ Խ. Աբաջյանի մատնանշած տրամաբանությունը միանշանակ ճիշտ է, քանի որ ամեն առանձին հարցի վերաբերյալ որոշում պետք է ընդունվի: Այդ դեպքում ամեն հարցի վերաբերյալ առանձին քվեարկություն պիտի լինի: Նրա կարծիքով՝ նշված երկու անձերից մեկի պարագայում կարող է լինել մի, մյուսի դեպքում՝ մեկ այլ դիրքորոշում: Գ. Հարությունյանը պնդեց, որ առաջարկները պետք չէ առանձին համարել և միասին քվեարկել: Ա. Մարտիրոսյանն առաջարկեց առանձին քվեարկել առաքված օրակարգը և ներկայացված առաջարկները: Գ. Մուրադյանը համաձայնվեց, որ օրակարգում ամեն հարցի ընդգրկումն առանձին դրվի քվեարկության: Ա. Հախումյանը մտահոգվեց որոշումների հետևանքներով, իսկ Գ. Մուրադյանը պարզաբանեց, որ, օրինակ, իրեն վերաբերող որոշումը կասեցնելու է միայն իր անդամությունը: Խ. Աբաջյանն էլ նշեց, որ եթե օրակարգն ընդհանրապես չի հաստատվում, նիստը հետաձգվում է: Ա. Հախումյանը և Ա. Զուբարյանը բարձրացրին այն հարցը՝ արդյոք Խորհուրդն իրավասու է ՀՀ վարչապետի կողմից հաստատված անդամին հեռացնել Խորհրդի կազմից: Գ. Մուրադյանը պատասխանեց, որ նման իրավունք Խորհուրդն ունի: Մեջբերելով Խորհրդի աշխատակարգի 2.10 կետը՝ նույնը պատասխանեց Ժ. Անդրեասյանը: Խ. Աբաջյանը նորից պնդեց, որ յուրաքանչյուր հարց պետք է առանձին քվեարկել, քանի որ ամեն անհատի վերաբերյալ կարծիքը կարող է տարբեր լինել: Հ. Նավասարդյանը պնդեց, որ միայն քվեարկության ժամանակ է պետք առանձնացնել քվեարկությունը: Մ. Մալխասյանը, սակայն, նշեց, որ եթե 16 անդամների վերաբերյալ որոշում քննարկվեր, բոլորի համար ընդհանուր մեկ քվեարկությո՞ւն էր լինելու, և Խորհուրդն այդպես անգործունա՞կ էր դառնալու: Նա նշեց, որ Գ. Մուրադյանը հենց ինքն է ամենաճիշտ տարբերակն առաջարկել՝ հարցերն օրակարգ մտցնելու խնդիրն առանձին-առան-

ձին քվեարկել: Նիստը նախագահողը խնդրեց, որ Մ. Սողոմոնյանը հստակեցնի իր առաջարկը, և վերջինս առաջարկեց Խորհրդի երկու անդամների վերաբերյալ քվեարկությունը կատարել առանձին-առանձին: Ժ. Անդրեասյանն առաջարկեց հարցը մտցնել օրակարգ մեկ փաթեթով, իսկ արդեն դրա հաստատումից հետո հարցի քննարկման ժամանակ անձերի համար քվեարկել առանձին-առանձին: Նա, որպես օրինակ, նշեց ծանուցված օրակարգի երրորդ կետը, որտեղ ԵՊՀ ռեկտորի և Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության մրցույթների հարցերը ներառվել են մեկ կետի մեջ: Մ. Մալխասյանը նշեց, որ Ժ. Անդրեասյանը շատ ճիշտ է հիմնավորում՝ այդ հարցերը ևս պետք է առանձին ներկայացված լինեին, ընթացիկ հարցեր նույնպես պետք է ներառված լինեին օրակարգում: Նա շարունակեց, որ կարող է մի անդամի հարցի դեպքում համոզվում է՝ իրավական հիմնավորումը հստակ է, և նրա հարցը պետք է դրվի օրակարգ, իսկ մյուս դեպքում այդ անձի հարցը գուցե պետք չի ընդգրկել օրակարգ: Գ. Մուրադյանն արձագանքեց, որ նախագահողը թող որոշի՝ ինչպես հարցը դնել քվեարկության, իսկ օրակարգի երրորդ հարցի առնչությամբ ասաց, որ հետո կբացատրի, թե ինչու են այդպես ձևակերպել:

Նիստը նախագահողը Գ. Մուրադյանի և Վ. Պապիկյանի՝ Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման հարցը նիստի օրակարգ ընդգրկելը դրեց քվեարկության. կողմ՝ 10, դեմ՝ 13, ձեռնպահ՝ 2: Քվեարկությանը չմասնակցեցին Խորհրդի ներկա անդամներից 5-ը: Որոշումը չընդունվեց: Այս առիթով իրենց հակիրճ դիտարկումները հնչեցրին Գ. Մուրադյանը, Մ. Մալխասյանը և Ա. Մարտիրոսյանը:

Այնուհետև նիստը նախագահողը քվեարկության դրեց Խորհրդի աշխատակարգում փոփոխություն մտցնելու հարցը. կողմ՝ 9, դեմ՝ 17, ձեռնպահ՝ 0: Քվեարկությանը չմասնակցեցին Խորհրդի ներկա անդամներից 4-ը: Որոշումը չընդունվեց:

Ա. Չուբարյանն առաջարկեց քվեարկության դնել նիստի՝ նախապես ծանուցված օրակարգը.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի և Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության կազմակերպման հարցերի քննարկում:

Օրակարգը դրվեց քվեարկության. կողմ՝ 28, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1: Քվեարկությանը չմասնակցեց Խորհրդի՝ ներկա անդամներից 1-ը: Օրակարգը հաստատվեց:

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն: Խորհրդի նախագահի պաշտոնում Դ. Ափոյանն առաջադրեց ՀԲԸՄ հայաստանյան մասնաճյուղի նախագահ Վ. Յակուբյանի թեկնածությունը՝ շեշտելով, որ նա ղեկավարում է համահայկական ամենամեծ կառույցը, աշխատում բարերարների ու գործարարների հետ, իր պրոֆեսիոնալիզմով ու հմտություններով կկարողանա կազմակերպել ԵՊՀ ֆինանսական կայունությունը, կմեծացնի բուհի համագործակցության շրջանակը: Վ. Յակուբյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար, սակայն նշեց, որ, ծանրաբեռնվածությունից ելնելով, ստիպված է մերժել առաջարկը, քանի որ Խորհրդի նախագահի պարտականությունը բավականին ծանր և պատասխանատու գործ է, իսկ համատեղումն արդյունավետ չի լինի:

Ա. Մարտիրոսյանն առաջադրեց Խորհրդի նախկին նախագահ Գ. Մուրադյանի թեկնածությունը՝ նշելով, որ վերջինս համալսարանական է, դաշտում ընկալելի մարդ է, սրտացավ է համալսարանի հանդեպ, պաշտպանում է համալսարանի շահը:

Կ. Խաչատրյանն առաջադրեց նաև ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահ Ս. Հայոցյանի թեկնածությունը՝ փաստելով, որ, համալսարանի ռազմավարության համաձայն, ԵՊՀ-ն հետազոտական բուհ դարձնելու տեսլական կա, իսկ Ս. Հայոցյանի՝ գիտության ոլորտում կազմակերպական աշխատանքները համակարգելու փորձառությունը կարող է այդ հարցում նպաստավոր լինել համալսարանի համար: Ս. Հայոցյանը, պատճառաբանելով իր զբաղվածությունը, հանեց իր թեկնածությունը:

Այս ինքնաբացարկները լսելով և մինչ այդ իր առաջարկած հարցերն օրակարգում ներառելու մերժումը տեսնելով՝ Մ. Սողոմոնյանը լքեց նիստերի դահլիճը՝ նշելով, որ իր կողմից բարձրաձայնված հիմնավորումները կներկայացնի դատական ատյաններում:

Գ. Մուրադյանը, մնալով նախագահի միակ թեկնածուն, ներկայացրեց իր կենսագրությունը՝ նշելով, որ սովորել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում, այնուհետև եղել է արտերկրի գիտական տարբեր կենտրոններում, մասնակցել է մի շարք դրամաշնորհային և գիտահետազոտական ծրագրերի: Եղել է ՀՀ վարչապետ Կ. Կարապետյանի խորհրդականը, ապա՝ գլխավոր խորհրդականը, իսկ նրա հրաժարականից հետո գնացել է բիզնես ոլորտ և ունի հինգ ընկերություններ: Ըստ Գ. Մուրադյանի՝ համալսարանի խնդիրները շատ են, որոնք կապված են կառուցվածքային բաժանման, կադրային քաղաքականության, բարձրագույն կրթության կազմակերպման, բյուջեի, աշխատավարձերի, հավատարմագրման և այլն հարցերի հետ: Նա խոսեց աշխատավարձի բարձրացման անհրաժեշտության մասին, սակայն նշեց, որ մի քանի տասնյակ տոկոսով դրանց բարձրացումն անգամ երկարամյա տեսանկյունից լուծում չի:

Գ. Մուրադյանին Խորհրդի անդամները հղեցին տարաբնույթ հարցեր: Խորհրդի անդամ, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Սարգսյանը հարցրեց, թե որն է Գ. Մուրադյանի պատկերացրած ռեկտորի կերպարը: Գ. Մուրադյանը պատասխանեց, որ առկա պայմաններում, նրա համոզմամբ, ԵՊՀ ռեկտորը պետք է լինի կառավարիչ-մենեջեր և ունենա գիտնական տեղակալներ, այլ ոչ հակառակ տրամաբանությամբ:

Այնուհետև հարց ուղղեց Ժ. Անդրեասյանը: Նա հետաքրքրվեց, թե Գ. Մուրադյանն ինչպես է պատկերացնում մասնակցայնության ապահովումը տարբեր գործընթացներում, մասնավորապես՝ ուսանողական կառույցների աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Գ. Մուրադյանը պատասխանեց, որ դա ավելի շատ ռեկտորին ուղղվելիք հարց է, սակայն այս տեսանկյունից Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի լուծարումը համապատասխանում է իր տեսլականին, քանի որ, ըստ նրա, կառույցի միջոցով ուսանողի հարցը դառնում է ռեկտորատի հետ հարաբերությունների խնդիր:

Խորհրդի անդամ, ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտ Բ. Հովհաննիսյանը հարցրեց, թե արդյոք նախատեսվում է աշխատավարձերի բարձրացում, և ինչ աշխատանքներ է տարել Գ. Մուրադյանը բուհ-աշխատաշուկա հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Նա նաև խնդրեց, որ Խորհրդի նախագահի թեկնածուն հստակեցնի Խորհրդի աշխատանքներում նախկինում առաջացած խնդիրների շուրջ իր մոտեցումները: Գ. Մուրադյանը պատասխանեց, որ աշխատավարձի բարձրացման նախաձեռնողը սովորաբար ռեկտորն է, և նման նախաձեռնություն նախ եղել է ԵՊՀ նախկին ռեկտոր Ա. Սիմոնյանի, ապա՝ ներկայիս ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանի կողմից, իսկ Խորհուրդը պարտավոր է հաստատել այն: Իր պատկերացմամբ՝ բարձրացումը պետք է այնպես կազմակերպել, որ չվատնվեն բուհի ֆինանսական խնայողությունները: Երկրորդ հարցի շուրջ նա բերեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ու բիզնեսի համագործակցության օրինակը, որով ի ցույց դրեց բիզնեսն ու գիտելիքը համատեղ գործի դնելու հնարավոր ընթացքը: Բ. Հովհաննիսյանը հետաքրքրվեց՝ արդյոք աշխատավարձի բարձրացումները կատարվել են ուսման վարձերի բարձրացման հաշվին: Գ. Մուրադյանը պատասխանեց, որ եղած բարձրացումները չեն կարող բավարարել աշխատավարձերի նախատեսվող աճը: Նա նշեց, որ որակյալ կրթություն, շուկայական պահանջ և բարձր աշխատավարձ ապահովելու համար անհրաժեշտ է 1-1,2 մլն դրամ ուսման վարձ, սակայն նման չափի բարձրացում հնարավոր չի անել, քանի որ պետական բուհն ունի նաև սոցիալական պատասխանատվության գործառույթ:

Ա. Հախումյանը հետաքրքրվեց բուհի բյուջեում պետության, մասնավոր ներդրողների և ուսանողների կողմից վճարված ուսման վարձերի ունեցած տեսակարար կշռի մասին: Գ. Մուրադյանի կողմից ներկայացված թվերով Ա. Հախումյանը հաշվարկեց, որ շուրջ 65 %-ը բուհը պետությունից չի ստանում, ուստի առաջարկեց, որ բուհի կառավարման գործում բուհն այդքան մասնաբաժնով ներկայացված լինի: Գ. Մուրադյանը պատասխանեց, որ ԵՊՀ-ն պետական բուհ է, հետևաբար պետությունը՝ որպես հիմնադիր, գույքն անհատույց տված մարմին, ամբողջությամբ պատասխանատվություն է կրում բուհի զարգացման ուղղության հարցում: Ըստ նրա՝ աշխարհում գոյություն չունի պետական բուհ, որի կառավարման մարմնի անդամներին չի նշանակում պետությունը, և եթե

բուհի կառավարումից պետությունը հեռանա, բուհը կարող է գնալ փակման ճանապարհով:

Կ. Խաչատրյանը հարց ուղղեց, որ, բացի մի խումբ եվրոպացի մասնագետներին հրավիրելը և նրանց կողմից ծավալուն վերլուծության զեկույցը, ֆինանսական որոշակի օպտիմալացումները, նիստերի ժամանակ ինչու նման բովանդակային հարցեր չեն բարձրաձայնվել, ռազմավարական զարգացման տեսլականից բխող հարցեր քիչ են քննարկվել: Ըստ նրա՝ ավելի շատ տեսանելի են եղել հաշվետվությունների և կառուցվածքային փոփոխությունների քննարկումները: Գ. Մուրադյանը չհամաձայնվեց հնչած դիտարկման հետ, սակայն նշեց, որ անցումային շրջան են ունեցել, հետևաբար ֆորմալ տրամաբանության մեջ չեն եղել գործողությունները, որոնք պետք է նախևառաջ անցնեին ռեկտորատի օղակով: Նա դժգոհեց, որ անձնական պատասխանատվության ինստիտուտը լավ չի պահպանվում Մայր բուհում, նշեց նաև իրավական բացերի մասին: Ըստ նրա՝ Խորհուրդը պետական բուհի դեպքում չի կարողանում լիարժեք ներկայացուցչական լինել, քանի որ այդտեղ քաղաքական երանգավորումներ են առաջանում:

Մինչ քվեարկությանն անցնելը Խ. Աբաջյանը հանդես եկավ ելույթով՝ բացասական գնահատելով Գ. Մուրադյանի նախորդ պաշտոնավարումը: Նա նշեց, որ 2019 թ. հունվարի 22-ին տեղի ունեցած Խորհրդի նիստում, երբ Գ. Մուրադյանն ընտրվել է Խորհրդի նախագահ, խոստացել է, որ շարունակական հանդիպումներ է ունենալու ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ՝ խնդիրների բարձրաձայնման և քննարկման նպատակով: Նա մեջբերեց Գ. Մուրադյանի ելույթից, որ նա խոստացել է իր բոլոր գործողություններն ուղղել ԵՊՀ շահին, սակայն ավելի քան մեկ տարվա պաշտոնավարման ընթացքում որևէ ձևաչափով հանդիպում-քննարկում ընդհանրապես տեղի չի ունեցել: Խ. Աբաջյանը նշեց, որ այդ նիստում Գ. Մուրադյանի առաջարկով դրական գնահատվեց ԵՊՀ նախկին ռեկտոր Ա. Սիմոնյանի հաշվետվությունը, սակայն նույն տարվա փետրվարի 28-ին անհասկանալի հանգամանքներում նրա նախաձեռնությամբ գումարվեց նոր նիստ՝ Ա. Սիմոնյանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը քննարկելու համար: Որևէ հիմնավորում նիստի հրավիրման համար չներկայացվեց, իսկ հիմնական թեզն այն էր, որ նիստի գումարման փաստաթղթերին ծանոթանալու ժամանակի սղության պատճառով նախորդ նիստին

անվստահություն չէին հայտնել ռեկտորին: Ըստ Խ. Աբաջյանի՝ սա ոչ համոզիչ և հիմնազուրկ փաստարկ էր, և այդ քայլը որևէ կերպ ԵՊՀ շահերից չէր բխում, ուստի օրակարգը չհաստատվեց, և նիստը չեղարկվեց: Նա շարունակեց, որ երբ 2019 թ. մայիսի 30-ին տեղի ունեցած նիստում քննարկվում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման հարցը, Գ. Մուրադյանը նշում էր, թե խոսքն ընդամենը մի քանի ամիս կառավարչական գործառույթների մասին է, որով պետք է օպերատիվ կառավարում կատարվի, մինչև որ տեղի կունենա ռեկտորի ընտրության: Խ. Աբաջյանի կարծիքով՝ մի քանի ամիս օպերատիվ կառավարում ասելով՝ ամենևին հնարավոր չէ հասկանալ 1 տարի երեք ամիս առանց որևէ ծրագրի, տեսլականի, չափելի արդյունքների բուհի կառավարում: Նա հավելեց, որ իր համար տարօրինակ էր ռեկտորի ընտրության ձգձգումը, որի պատասխանատուն նա համարում է Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանին: Խ. Աբաջյանը շարունակեց, որ 2019 թ. հունիսի 29-ի նիստում Գ. Մուրադյանը, իր լիազորությունների ակնհայտ չարաշահմամբ, միևնույն հարցը տարբեր ձևակերպումներով դրել է քվեարկության, երբ դա երեք անգամ անընդմեջ մերժվում էր: Սա, ըստ նրա, ապացուցում է, որ ԵՊՀ շահերին ծառայելու գործողությունները փոխարինվել են անձնական ցանկությունները կամ այլ պայմանավորվածությունները բավարարելուն ուղղված գործողություններով: Խ. Աբաջյանի կարծիքով՝ դրա արդյունքում հերթական դատական հայցն է եղել ընդդեմ Մայր բուհի՝ Խորհրդի լիազորությունների չարաշահման հիմքով: Նա նաև նշեց, որ երբ շուրջ մեկամյա անորոշ իրավիճակից հետո՝ 2020 թ. մարտի 23-ին, նախատեսվել էր ԵՊՀ ռեկտորի ընտրության նիստի օր, ՀՀ-ում արտակարգ դրության պատճառով Գ. Մուրադյանը միանձնյա որոշում կայացրեց չեղարկել նիստը՝ գիտակցելով, որ օրեր անց՝ ապրիլի 1-ի դրությամբ, դադարեցվելու են Խորհրդի լիազորությունները, և հարցը մտնելու է փակուղի: Խ. Աբաջյանը շեշտեց, որ նիստի չեղարկումը չպետք է լիներ միանձնյա որոշումով և պետք է քննարկվեր Խորհրդի մյուս անդամների հետ՝ հարցման կարգով կամ առցանց նիստի միջոցով, որոնք թույլատրված են Խորհրդի աշխատակարգով: Սրանով, ըստ նրա, փաստացիորեն հինգ ամսով ևս երկարացվել է ԵՊՀ-ում տիրող անորոշ և լարված իրավիճակը: Նա հավելեց, որ այդ ամիսների ընթացքում պետական կառավարման տարբեր մարմինները, ինչպես նաև ԵՊՀ գիտական խորհուրդը պարբերաբար գումարել են առկա, առցանց կամ հարցման կարգով նիստեր: Նրա կարծիքով՝ անցած ավելի քան մեկ տարվա ընթացքում ԵՊՀ-ն որևէ լուրջ առաջընթաց չի արձանա-

գրել, հետևաբար համարում է, որ Գ. Մուրադյանը չպետք է հավակնի Խորհրդի նախագահի պաշտոնին: Նա հույս հայտնեց, որ քվեարկելուց առաջ Խորհրդի անդամները հաշվի կառնեն իր նշած հանգամանքները:

Ա. Զուբարյանն առաջարկեց աշխատանքային բեռը չթողնել միայն Խորհրդի նախագահի ուսերին և Գ. Մուրադյանի թեկնածությունը դրեց քվեարկության. կողմ՝ 18, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0: Խորհրդի 10 անդամներ էլ չքվեարկեցին:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ, 24-րդ հոդվածի 2-րդ, 25-րդ հոդվածի 6-րդ, 26-րդ հոդվածի 1-ին կետերով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 34-րդ կետով և նույն հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրել Գևորգ Ատոմի Մուրադյանին:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն: Քարտուղարի գործառույթների համար Ա. Սողոմոնյանն առաջադրեց Մ. Մալխասյանի թեկնածությունը՝ հաշվի առնելով, որ, ըստ նրա, վերջինս 4 տարի գերազանց կատարել է իր պարտականություններն այդ պաշտոնում: Գ. Մուրադյանը ևս հավանության արժանացրեց առաջարկը՝ նշելով, որ ինքը ժամանակին անձամբ է հավաստիացել Մ. Մալխասյանի աշխատանքի որակի հարցում:

Մ. Մալխասյանն իր ելույթում նշեց, որ 2015 թ. ապրիլից մինչև 2019 թ. հունվար կատարել է Խորհրդի քարտուղարի լիազորությունները, և իր համար կարևորն իրավական ընթացակարգերին հետևելու գործելաոճն է: Այլ թեկնածություն չառաջադրվեց, և Մ. Մալխասյանի թեկնածությունը դրվեց քվեարկության. կողմ՝ 28, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել Միքայել Արմենի Մալխասյանին:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի և Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության կազմակերպման հարցերի քննարկում: Խորհրդի նախագահը հիմնավորեց, թե ինչու են երկու խնդիրները ներկայացվել օրակարգային մեկ հարցով: Նա տեղեկացրեց, որ ԵՊՀ ռեկտորի և ԻՄ տնօրենի՝ դեռևս մարտին նախատեսված մրցույթները հետաձգվեցին՝ պայմանավորված ՀՀ-ում հաստատված արտակարգ դրությամբ, իսկ եթե այդ ժամանակ նիստը տեղի ունենար, ապա ընտրության գործընթացը կարող էր խնդրահարույց լինել և վիճարկվել դատարանում: Գ. Մուրադյանի հավաստմամբ՝ իրավական կարգավորում այն մասին, թե ինչ պետք է անել հիմա, չկա, քանի որ նախորդ Խորհուրդը հայտարարել է մրցույթ, հայտեր են ներկայացրել հինգ թեկնածուներ, բայց գործընթացը կանգ է առել: Քանի որ Խորհուրդը ԵՊՀ կառավարման բարձրագույն մարմինն է, լիազորված է որոշելու ընտրությունների հետ կապված հետագա քայլերը, բայց, հաշվի առնելով ռիսկերը, Գ. Մուրադյանն առաջարկեց, որ Խորհուրդը հարցում ուղարկի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ և ՀՀ արդարադատության նախարարություն՝ հասկանալու, թե ինչ իրավակարգավորումներ կան տվյալ իրավիճակում: Նրա կարծիքով՝ այդ գործընթացը հնարավորություն կտա իրավական ճիշտ ճանապարհով կազմակերպել հետագա քայլերը, քանի որ ԵՊՀ ռեկտորի ընտրությունը Խորհրդի առջև ծառացած առաջնային խնդիրներից է:

Դ. Ափոյանը հարցի առնչությամբ կարծիք հայտնեց, որ նշանակված ժամանակահատվածում ընտրությունները, որ, ի վերջո, հետաձգվեցին, կարող էին տեղի ունենալ, քանի որ նույն արտակարգ դրության պայմաններում կազմակերպվել է Վանաձորի պետական համալսարանում ռեկտորի ընտրություն, եղել են կոլեգիալ տարբեր նիստեր: Այդուհանդերձ, նա համաձայնվեց առաջարկի հետ, որ պետք է համապատասխան հարցումներն ուղարկել:

Ա. Հախումյանն առաջարկեց նոր մրցույթ հայտարարել կամ գոնե թույլ տալ այլ թեկնածուների ևս առաջադրվելու, քանի որ փոխվել է Խորհրդի կազմը: Նրա կարծիքով՝ կարելի է սպասել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի հաս-

տատմանը, որով այլ չափանիշներ են սահմանվում Խորհրդի և ռեկտորի ընտրության համար: Նա նույնիսկ հարցրեց՝ արդյոք ընտրված ռեկտորի ժամկետը կարող է սահմանափակվել նոր օրենքի ընդունմամբ: Գ. Մուրադյանը պատասխանեց, որ իրավական ճանապարհը պետք է հստակեցվի, ուստի ինքը չի կարող այդ պահին մեկնաբանել: Նոր օրենքի ընդունման ժամկետն էլ դեռևս անորոշ է, սակայն ընտրված ռեկտորի դեպքում օրենքի ընդունումը չի կասեցնի պաշտոնավարման ամբողջական ժամկետը: Ժ. Անդրեասյանը հավելեց, որ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունում է և առայժմ չի ուղարկվել Ազգային ժողով: Նրա կարծիքով՝ անիմաստ է քայլերը ծրագրել նախագծի համաձայն, քանի որ դեռևս անհայտ է, թե վերջնական ինչ տեսք է ունենալու այն: Ըստ նրա՝ լինելու են անցումային դրույթներ: Նա նաև մտահոգություն հնչեցրեց, որ Խորհրդի նիստի օրակարգում հարց ավելացնելու համար կարելի է ժամկետ սահմանել, սակայն Խորհրդի նորընտիր քարտուղար Մ. Մալխասյանը պատասխանեց, որ Խորհրդի աշխատակարգով նման սահմանափակում չկա, և հնարավոր չէ թույլ չտալ Խորհրդի անդամին չներկայացնել իր առաջարկը նիստի ժամանակ:

Խորհրդի ուսանող անդամները հետաքրքրվեցին, թե որքան ժամանակ հետո կստացվեն հարցումների պատասխանները, իսկ Գ. Մուրադյանը պատասխանեց, որ, իր կարծիքով, գործընթացը կտևի 7-10 օր: Ա. Սարգսյանն էլ հարցրեց՝ արդյոք Մ. Սողոմոնյանի ելույթը տեղ է գտնելու նիստի արձանագրության մեջ, Գ. Մուրադյանը և Մ. Մալխասյանը պատասխանեցին՝ իհարկե այո:

Հարցումների առնչությամբ Մ. Մալխասյանը նշեց, որ ճիշտ է համարում իրավաբանների կարծիքը լսելը՝ բերելով 2015 թ. ԵՊՀ ռեկտորի օրինական ընտրության օրինակը: Քանի որ 2015 թ. ԵՊՀ ռեկտորի ընտրության մրցույթը կազմակերպվել է ամբողջությամբ օրինական ընթացակարգով՝ համաձայն ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի, հետևաբար դա փաստվել է նաև ՊՎԾ կողմից ստուգումների արդյունքում. Մայր բուհն ունեցել է օրինական ընտրված ռեկտոր: Ելնելով այդ փորձառությունից՝ այս անգամ ևս պետք է ամեն ինչ արվի բացառապես իրավական ընթացակարգերի շրջանակներում, իսկ եթե կան բարձրաձայնվող խնդիրներ, դրանք պետք է հաշվի առնել, որպեսզի համալսարանը չմտնի դատական գործերի նոր շրջափուլ: Նա ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգից մեջբերեց 2.15 կետը, որտեղ հստակ սահմանված է, որ ռեկտորի

թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի հանձնումն ավարտվում է մրցույթի անցկացումից 15 օր առաջ, և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում հիմնադրամների մասին որևէ դրույթ չկա, հետևաբար դրանով ժամկետի ձգձգումը կարող է հակասությունների բերել: Նա կարծիք հայտնեց, որ մրցույթի օր չի կարելի այդ պահին նշանակել:

Գ. Մուրադյանի առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 140-րդ կետերով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի և Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության կանոնակարգերով սահմանված իրավական ընթացակարգերի պահպանման անհրաժեշտությամբ՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի պաշտոնի համար հոգաբարձուների խորհրդի 31.01.2020 թ. № 66 որոշմամբ 23.03.2020 թ. նշանակված, ինչպես նաև նույն հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնի համար հոգաբարձուների խորհրդի 31.01.2020 թ. № 68 որոշմամբ 16.03.2020 թ. նշանակված, այնուհետև հետաձգված ընտրությունների իրավական ընթացակարգի ճշտման նպատակով հարցում ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետ՝ համաձայն Հավելվածի:

Քվեարկությունից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակում ԵՊՀ առջև ծառացած առաջնային մարտահրավերների վերաբերյալ: Խորհրդի անդամ, ԱԳ նախարարի տեղակալ Ա. Ապիտոնյանն առաջարկեց հաջորդ նիստի ընթացքում լսել Խորհրդի նախագահի կամ ռեկտորատի կողմից ԵՊՀ ներկա իրավիճակի և առկա մարտահրավերների վերաբերյալ գնահատական կամ զեկույց՝ համեմատելով ՀՀ-ում գործող մյուս բուհերի, ինչպես նաև արտերկրի՝ համեմատելի կարգավիճակ ունեցող այլ բուհերում առկա իրավիճակի հետ: Նա նաև նշեց, որ բուհի հեղինակությունը բարձր պահելու և զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է Խորհրդի կողմից ընդունել երկարաժամկետ՝ 10 տարի կամ ավելի, զարգացման և մրցունակության բարձրացման ռազմավարություն,

որի հիման վրա կկայացվեն Խորհրդի հետագա որոշումները: Ա. Չուբարյանը ևս մտահոգություն հայտնեց, որ Մայր բուհի հեղինակությունը բարձրացնելու անհրաժեշտություն կա՝ վկայակոչելով խորհրդային տարիներին նրա ունեցած անվիճելի բարձր վարկը: Նույն մտահոգությունից ելնելով՝ Ա. Հախումյանն առաջարկեց հետագայում ծրագրել բուհի անվանափոխություն՝ ներառելով «ազգային» բառը, որպեսզի ընդգծվի Մայր բուհի դերը ՀՀ-ում:

Գ. Մուրադյանն արձագանքեց մտահոգություններին, որ, ըստ բուհի կանոնադրության, ռազմավարությունը մշակում է ռեկտորատը և ներկայացնում Խորհրդի հաստատմանը: Ըստ նրա՝ դեռևս գործում է մինչև 2020 թ. վերջ գործող ռազմավարական զարգացման ծրագիր, և առաջիկայում էլ անհրաժեշտ է ընդհանրացման տրամաբանություն ավելացնել նրանում: Դա արվելու է առաջիկա մեկ տարվա ընթացքում: Խորհրդի անդամ, ԲՏԱ նախարարի տեղակալ Վ. Պողոսյանը կարծիք հնչեցրեց, որ ԵՊՀ ռեկտորի ընտրության համար չափանիշներից մեկը պետք է լինի նաև Մայր բուհի զարգացման ռազմավարության վերաբերյալ թեկնածուի մոտեցումներին ծանոթանալը: Գ. Հարությունյանն էլ խնդրեց չխառնել Խորհրդի և ռեկտորատի գործառույթները:

Այնուհետև Գ. Մուրադյանը նիստը հայտարարեց փակված:

Խորհրդի նախագահ՝ **Գ. Մուրադյան**

Քարտուղար՝ **Մ. Մալխասյան**